

# «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթի հարցազրույցը Օբսֆորտի համալսարանի դասախօսներին Հրաչ Չիլինկիրեանի հետ

## ԿԱՐԵՆՈՐ ՄՏԱՅՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սփիւռքահայ գիտնականը կը մեկնաբանէ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ ծառայած երկու հիմնական խնդիրները՝ անվտանգութիւն եւ գաղթականութիւն:

«Արորա Երկխօսութիւններ-2017» նախագիծի ծիրէն ներս, «Պատերազմները, կրօնական ծայրայեղութիւնները եւ ապագային սպասուող մարտահրաւերները Մերձաւոր Արեւելքի մէջ Արեւելեան Քրիստոնէութեան համար» թեմայով, վերջերս, Երեւանի Պետական համալսարանին մէջ դասախօսութիւն ունեցաւ ծանօթ գիտնական, Օբսֆորտ համալսարանի դասախօս՝ Հրաչ Չիլինկիրեան:

Տեղ. Հրաչ Չիլինկիրեան խօսեցաւ այն կարեւոր մարտահրաւերներուն մասին, որոնք այսօր ծառայած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ՝ Մերձաւոր Արեւելքի մէջ ընթացող պատերազմներուն, կրօնական ծայրայեղութիւններուն, միջհամայնքային հակամարտութիւններուն, ցեղասպանութեան, քրիստոնէական ծայրայեղութեան անկման եւ բնակչութեան գաղթին եւ տեղաշարժներուն համատեքստին վրայ:

Իրեն ընկերաբան, Հրաչ Չիլինկիրեան վերջին տարիներու իր ուսումնասիրութիւններուն մէջ եւ հանրային ելոյթներուն ընթացքին ուշադրութիւն հրահարած է Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէայ համայնքներուն եւ փոքրամասնութիւններու իրաւորութեան վրայ, մանաւանդ գիտական եւ քաղաքական որոշումներ կայացնողներու շրջանակներէն ներս: Որպէս մտաւորական, իր ուսումնասիրութիւններուն, միտքերուն եւ ծրագիրներուն նպատակն է, մանաւանդ Սփիւռքի համար, ազգային ինքնութիւնը, մշակոյթը եւ լեզուն դարձնել առօրեայ ապրումս իրականութիւն:

Հրաչ Չիլինկիրեան հանդիպումներ եւ ելոյթներ ունեցաւ Լաւե Արցախի մէջ, ուրիշ վերադարձին Երեւանի մէջ պատասխանեց «ԺԱՄԱՆԱԿ»-ի հարցումներուն:

**- Այսօր Միջին Արեւելքը, ուր տեղի ունեցող խորումներուն մասին խօսեցաք, աշխարհի թէ՛ կէ՛տը կը սեպեք, որուն վրայ կը «բաբայիս» աշխարհի սիրողը:**

- Այո, եւ այդ տարածաշրջանին առջնորդ իմ ուսումնասիրութիւններուն հիմնական կերպով քրիստոնէայ համայնքներն ու ոչ-խալամ փոքրամասնութիւններն են: Եւ եթէ այք մը նետնեք այս վերջին տարիներուն տեղի ունեցող պատերազմներուն, իրադարձութիւններուն, լուրջ խնդիրներ դրուած են քրիստոնէայ համայնքներուն առջեւ: Գաղտնիք չէ, որ քրիստոնէայ համայնքները կը նստրանան ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքի մէջ: Անշուշտ ես այն կարծիքին չեմ, որ լրիւ պիտի վերանան այդ համայնքները:

**- Բայց յաճախ լուրեր կը տարածուին, որ յատուկ նպատակ մը կայ Մերձաւոր Արեւելքի մէջ քրիստոնէութիւնը բնաջնջելու, այդ մասին ի՞նչ կ'ըսեք:**

- Ես չեմ ըսեր՝ յատուկ քաղաքականութիւն է: Անշուշտ, իսլամական ծայրայեղութիւնը իր գաղափարախօսութեան մէջ ունի Միջին Արեւելքը մաքրելու ոչ-խալամական տարրեր, այդ իմաստով իրենց գաղափարախօսական կամ «աստուածաբանական» բացատրութեան մէջ այդ մէկը կայ: Բայց չեմ կարծեր, որ այդպէս ծրագրուած բան մըն է եւ պետութիւններ նստած ու ծրագրած են քրիստոնէութիւնը ի սպառ վերացնել: Անշուշտ, վտանգը եղած է եւ տակաւին կայ:

Այսօր երկու հիմնական խնդիր կայ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէութեան առջեւ: Առաջինը՝ ապահովութեան եւ անվտանգութեան խնդիրն է: Եւ այստեղ, ըստ գոնե իմ ուսումնասիրութիւններուն, անապահովութեան հիմնական երեք մակարդակներ կան. մէկը ֆիզիքական ապահովութեան, անվտանգութեան խնդիրն է: Մարդիկ գոյութեան խնդիր ունին այնտեղ՝ ռուսներու, կրակոցներու տակ անոնք պետք է իրենց կենեքը ապահովեն կամ փրկեն:

Անապահովութեան երկրորդ մակարդակին վրայ կայ ընկե-

րային-տնտեսական ապահովութեան խնդիրը: Այսինքն, այս պատերազմները, բախումները վերջին վեց-եօթը տարիներու ընթացքին այնպիսի իրավիճակ մը ստեղծած են, որ տնտեսութիւնները, մանաւանդ Սուրիոյ եւ Իրաքի մէջ, լրիւ անկումի մէջ են, մարդիկ աշխատանք չունին, գործատեղիներ կորսուած են, եկամտի աղբիւրները չբացած են եւ այլն, եւ այլն:



Իսկ երրորդը, որ քիչ մը ավելի երկարաժամկետ ապահովութեան խնդիր է, այն ալ մշակոյթի եւ կրօնքի անվտանգութեան խնդիրն է: Այսինքն, այդ տարածաշրջանին մէջ, մանաւանդ իսլամական ծայրայեղութեան պարունակին մէջ, նաեւ լուրջ խնդիր է կրօնական ազատութեան հարցը, եւ փոքրամասնութիւնները, մանաւանդ քրիստոնէաները, իրենց հաւատքը, կրօնը ու մշակոյթը պահպանելու եւ ազատութիւն գործածելու անմիջապէս հարց ունին: Ապահովական այս հարցերն են, զորս այսօր կը դիմագրուէ Մերձաւոր Արեւելքի քրիստոնէայ բնակչութիւնը:

Միւս՝ երկրորդ խնդիրը, որ կը բնի այս անվտանգութեան հարցէն, գաղթականութիւնն է, տեղաշարժներն ու տեղափոխութիւնները: Վերջին տասը տարիներու ընթացքին հսկայական արտագաղթ եղած է եւ տակաւին կը շարունակուի: Օրինակ, Իրաքի մէջ մէկ միլիոնէ ավելի քրիստոնէաներ արդէն երկիրը լքած են: Պատերազմէն առաջ Իրաքի մէջ կար մօտ մէկ միլիոն երեք հարիւր հազար քրիստոնէայ, այսօր հազիւ երկու երեք հարիւր հազար մնացած է ամբողջ Իրաքի մէջ: Թիւերու առումով նոյն նուագումն է նաեւ ուրիշ երկիրներու մէջ:

**- Իսկ տարածաշրջանին մէջ հայութեան տեղաշարժներուն եւ գաղթին մասին ի՞նչ տուեալներ կան:**

- Ես փոքրիկ ուսումնասիրութիւն մը դրած եմ, եւ եթէ բաղդատենք անցնող քառասուն տարիներու թիւերը, կը տեսնեք, որ հայ համայնքները Մերձաւոր Արեւելքի մէջ վաթսուն հիկ տոկոսով ավելի նուագած են: Այսօր Մերձաւոր Արեւելքի մօտ տասը երկրի մէջ, ուր մեծ թիւով հայ համայնքներ կային, հազիւ մնացած է մօտ երկու հարիւր յիսուն հազար հայութիւն, ներառեալ Իրանը, Լիբանանը, Սուրիան, Իրաքը, Եգիպտոսը, նաեւ Թուրքիան, եթէ Միջին Արեւելքը նկատի առնենք քիչ մը լայն իմաստով: Երեւակայեցեք, եօթասունականներուն, որ հայութիւնը վեց հարիւր յիսուն-եօթը հարիւր հազար էր, հիմա մօտ երկու հարիւր յիսուն հազար է միայն:

**- Այս տեղաշարժներուն շնորհիւ այդ մարդոցմէ շատ քիչերուն հայեացքը կ'ուղղուի դէպի հայրենիք, այլ երկիրներ կ'երթան անոնք, այդ ալ ուրիշ մտահոգի հարց մըն է, քանի որ**

## ԱՐՑԱՆԻ ՄԵՋ Կ'ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԻ ԵՒ ԿԸ ՀԱՇՈՒՄԱՐԿՈՒԻ ԱՆԱՋՆԱԳԻԾԸ ՄՇԱՊԵՍ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐՈՎ ԱՊԱՀԵԼՈՒ ՀԱՐՅԸ

Յառաջիկային բանակին մէջ եւ յատկապէս առաջնագիծին վրայ պիտի իրականացուին շարք մը կարեւոր ծրագիրներ, որոնք եականօրէն պիտի ազդեն զինուորական ծառայողներու հասարակական-կենցաղային պայմաններու բարելաւման վրայ:

Այս մասին, ըստ «Artsakpress.am»-ի, դիմատետրի իր էջին գրած է Արցախի նախագահի խորհրդական Տիգրան Արարիան:



Անոր փոխանցումով՝ Արցախի մէջ ներկայիս կ'ուսումնասիրուին եւ կը հաշուարկուին առաջնագիծը մշտապէս խմելու ջուրով ապահովելու հարցը: Ծրագիրը բարեյաջող իրականացած է Տրակախի մէջ (նախապէս՝ Ճապարայի, որը դիրքեր ապահովուած են մշտական ջուրով):

«Առաջնագիծի վրայ ծանայած եւ ծանայող մարդիկ լաւ գիտեն այս ծրագիրին իրական ազդեցութիւնն ու զինը, իսկ զինուորական ծառայողներու հետ իրականացուող զրոյցներուն ժամանակ այս ծրագիրին իրականացումը ամենա-նախընտրելիներէն է: Ծրագիրին ներդրումը պիտի լուծէ մեծ թիւով խնդիրներ. առաջին հերթին, ծառայողներուն պիտի ընձեռուի օրուան ընթացքին անսահմանափակ քանակով ջուրի օգտագործման հնարաւորութիւն: Երկրորդ, ջուրի մեքենաները մշտապէս հակառակորդի թիրախին են եւ անվտանգութեան առումով լուրջ խնդիրներ կը ստեղծեն վարողներուն համար, ուստի ծրագիրին իրականացումով այս վտանգը ամբողջութեամբ պիտի չեզոքացուի: Երրորդ, անկախ պիտի ապահովէ ֆինանսական մեծ տնտեսումներ», նշած է Արարիան: Եւ ավելցուցած, որ Արցախի նախագահ Բակո Սահակեան յանձնարարած է ծրագիրը սեղմ ժամկետներու մէջ շինարարական աշխույժ փուլ տեղափոխել:

**Հայաստանը այսօր ունի ժողովրդագրական խնդիր, եւ լաւ կ'ըլլար, որ անոնք Հայաստան գալին, որպէսզի այդ հարցն ալ ձեռով մը լուծուէր:**

- Այս մէկը լուրջ հարց է: Անշուշտ ցանկալի է, որ մանաւանդ Միջին Արեւելքէն մարդիկ Հայաստան գան, որովհետեւ նախ մշակոյթի, միջավայրի եւ այլ նմանութիւններ գոյութիւն ունին, նոյնիսկ աշխարհագրական մօտութիւնները կրնայ դեր խաղալ: Բայց քանի որ ռեւէ գաղթական նախ իր ամենօրեայ մտահոգութիւնները ունի, իր ու ընտանիքին ամենօրեայ պետքերը հայրաքայելու անմիջական հարցն ունի, ուրեմն տեղ մը պիտի երթայ, ուր ինք կրնայ գանոնք ապահովել, պահել իր գաւակներն ու ընտանիքը: Հայաստանը այսօր, այդ, մենք կը ներկայացնենք որպէս մեր ինքնութեան կարեւոր մէկ մասը, կ'առաջարկենք մարդոց, որ գան Հայաստան, ձեռով մը փորձելով անոնք հայրենասիրական զգացումներուն դիմել, բայց միւս կողմէ եթէ անոր առջնութիւն այդ մարդուն, այդ հայուն, որ գաղթական է, ամենահասարակ պայմանները չենք կրնար ապահովել, ուրեմն այդ մարդը թերեւս իր հոգով, սրտով կ'ուզէ Հայաստան գալ, բայց հնարաւորութիւնները այստեղ բաւարար չեն, ըսեցեք՝ տուն վարձելու դրամ չունի, իր ասպարեզին մէջ աշխատանք գտնելու հնարաւորութիւն չունի եւ այլն, ուրեմն Հայաստան պիտի մայ ի՞նչ պիտի ընէ: Եթէ գայ, թերեւս ինքզինքը նոյն վիճակին մէջ կը պատկերացնէ, ինչպէս որ էր իր երկրին մէջ, ուրիշ նաեւ այս հարցերուն պատճառով գաղթած է: Այս հարցը շատ անելի բարդ է, քան մենք մեր ազգային քննարկումներուն մէջ կը պատկերացնենք: Ինչպէս ըսի՝ զգացումներով կը խօսինք այս հարցին մասին, բայց միայն զգացական բաւարար չէ: Այդ հայերը կ'երթան Չինաստան կամ ուրիշ երկիրներ, որովհետեւ իրենց որոշ նախնական պայմաններն են որոշ պարտաւոր գեղին կան, եւ երբ անմիջապէս հասնին, քիչ մը իրենց զիրենց կը գտնեն եւ կամաց-կամաց կը սկսին իրենց կենսը վերականգնել: Հիմա Հայաստանի մէջ այլ խնդիր մը կայ, որուն ես քանիցս նախադրած եմ: Հայաստանի մէջ նոյնքան կարիքաւոր մարդիկ կան, գաղթականներու նման անոնք պատշաճ տուն չունին, աշխատանք չունին, մեծ ընտանիք ունին, որուն ամենօրեայ հոգերը չեն կրնար հոգալ, առողջական խնդիրներ ունին: Պաշտօնական տուեալներով՝ Հայաստանի մէջ ինչ հարիւր հազար աղքատ կայ, այս մէկը պաշտօնական տուեալն է, թերեւս ավելի է թիւը: Ուրեմն, ձեռով մը կանգնած ենք իսպառնակ մը առջեւ. եթէ Միջին Արեւելքէն եկած գաղթականներուն պիտի օգնենք, ժողովուրդը կ'ըսէ՝ մենք ալ հոս նոյն խնդիրներն ունինք, ինչու՞ մեզի չէք օգնէր...

**- Ինչպէ՞ս կը պատկերացնեք այս հարցերուն լուծումը:**

- Այսօր մենք աշխարհի մը մէջ կ'ապրինք, ուր պետք է բազմակողմանի աշխատանք տանինք, բազում ուղղութիւններով մտածենք: Այնպէս չէ, որ Հայաստանի բոլոր խնդիրները պետք է լուծենք, յետոյ սկսինք Սփիւռքի մէջ հայ գաղթականներու մասին մտածել: Ուրեմն, զուգահեռ, նոյնիսկ բազմակողմանի նայելով է որ այս բոլոր հարցերուն լուծում պետք է տրուի:

**- Իսկ գալով Մերձաւոր Արեւելքի տեղաշարժներուն, ինչպէ՞ս կը պատկերացնեք ապագան, ինչպէ՞ս կը դիտարկեք այդ անորոշութիւնը, մանաւանդ որոշ գերտերութիւններու դեկլարութիւնը փոխուած են, եւ կը թուի, թէ որոշակի բան մը պիտի ըլլայ:**

- Նախ ըսեմ, որ Միջին Արեւելքի քրիստոնէութիւնը ընդհանրապէս արեւմտեան երկիրներու օրակարգին մէջ ալ չի յիշուիր: Այսպէս ըսենք՝ արեւմտեան պետական կամ հասարակութիւններու տեսադաշտին մէջ չեն անոնք: Երբ Միջին Արեւելք կ'ըսեն, մարդիկ անմիջապէս կը մտածեն ահաբեկչութեան մասին, ԻՇԻՊ-ի մասին, բայց ոչ ոք կը մտածէ, որ Միջին Արեւելքը քրիստոնէութեան օրրան է, այնտեղ ծնած է քրիստոնէութիւնը, եւ այնտեղ է որ հին արմատներ ունի, եւ այդ արմատները այսօր մերթ քաշ մերթ կը տկարանան:

Ինչ կը վերաբերի ապագային, անորոշ է, բայց ես այն կարծիքին չեմ, որ քրիստոնէութեան լրիւ պիտի պարպուին այդ երկիրները: Յստակ է, որ եկող տասնամեակներուն թուային իմաստով շատ ավելի փոքր համայնքներ պիտի ըլլան այնտեղ: Յատկապէս մեր պարագային, հաւանաբար հայկական համայնքները շատ ավելի փոքր պիտի ըլլան:

Գաղթականութիւնը իր զգալի հետեւանքները պիտի ձգէ այնտեղի համայնքներուն վրայ, որովհետեւ գաղթողները ձեռով մը միջին խալի անդամներ են՝ բժիշկներ, ուսուցիչներ, արհեստաւորներ եւ այլք, այն խալը, որ հիմնականօրէն կը պահէր մեր համայնքային կառոյցները՝ դպրոց, ակումբ, եկեղեցի եւ այլն: Ուրեմն, երբ այդ խալը կամաց-կամաց կը նստրանայ, կը նշանակէ, որ մենք ունինք ուղեղներու արտահոսք, եւ անոր հետեւանքով՝ նիւթական աղբիւրներու նուագում, քանի որ այդ արհեստավար մարդիկը հոն չեն, որպէսզի աշխատին եւ պահեն մեր համայնքային կառոյցները: Ուրեմն, այս բոլորին իրենց հետեւանք, կրնանք ըսել, որ մեր ազգային, համայնքային կառոյցները հետզհետէ պիտի տկարանան եւ արդէն որոշ չափով տկարացած են: Այսինքն, կը նշանակէ, որ փոխանակ քսան դպրոց ունենալու, թերեւս պետք է մտածենք զանոնք միացնել ինչ-վեց դպրոցներու մէջ:

**- Իսկ մարդուց, որ տարբեր երկիրներ կ'երթայ, իր դրական ազդեցութիւնը կ'ունենայ՝ այդ երկիրներուն մէջ, մանաւանդ որ մենք այդ երկիրներու հայութեան մասին գիտենք, որ աշխատող են, շեջնող են ուր որ երթան, ինքզինքնին կը փաստեն եւ այդպէս եղած է դարերու ընթացքին:**

- Չեղարքեցրական հարցում մըն է, որուն կրնանք թէ՛ դրական, թէ՛ ժխտական ձեռով նայիլ: Պատմութեան ընթացքին ալ, երբ Հայաստանը տկար եղած է անկումի մէջ գտնուած է, ուրիշ գաղութներ սփիւռքի մէջ ծաղկած են: Օրինակ, Անիի կործանումէն յետոյ, Եգիպտոսի մէջ ձեւարկուած է ծաղկուն հայկական համայնք մը: Ուրեմն, երբ գաղութ մը արտագաղթ կայ, ո՛ր որ կը վերականգնի արտագաղթի հոսքը, այնտեղ կը շարունակուի կամ կը վերականգնի համայնքային կենսը: Այսօր, վստահ, Չինաստանի մէջ սփիւռքահայերը ձեռով մը նոր շունչ տարած են հայ համայնքին. օրինակ, հայկական դպրոցներուն մէջ կրնան Հայելին զգացած ուսուցիչներ աշխատել եւ այլն: Ատիկա դրական բան մըն է, իսկ երկրորդ խնդիրը այն է, որ եթէ սփիւռք երեւոյթի տեսանկիւնէն նայինք, Լիբանան, Սուրիա կամ Մոնթթրէալ, նորէն սփիւռքի մասին է խօսքը: Այսինքն աշխարհագրական տարբերութիւնը կայ, բայց բովանդակութեան, իրականա-

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼԵՅ ԸԱԹԱՐԻ ՅԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ

Երկուշաբթի, 3 Յուլիս 2017-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը Պիքֆայայի Վեհարանի իր գրասենեակին մէջ ընդունեց Զաթարի Հայոց Ազգային Վարչութեան ատենապետ Արտակ Գաբրիւնեանը:



Վարչութեան ատենապետը Վեհափառ Հայրապետին զեկուցեց երկրէն ներս ստեղծուած կացութեան եւ վերջին օրերու նոր զարգացումներուն մասին: Ան նաեւ անդրադարձաւ հայ համայնքի ներկայ վիճակին, Ազգային Վարչութեան աշխատանքներուն եւ Վարչոյնկապական փոխանորդ Գերայ. Տ. Մետրոպ. Տ. Վրդ. Սարգիսեանի տարած աշխատանքներուն:

Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ իմանալէ ետք Զաթարի հայ համայնքին կազմակերպական դրական ընթացքին մասին, թելադրեց որ Ազգային Վարչութիւնը վերանորոգ նուիրումով շարունակէ իր գործունեութիւնը, յատուկ շեշտ դնելով համայնքի ներքին միասնականութեան ամրապնդման:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒՆՏ «Ճամանակ»



# «ԵՄ ՉԵՉ ՀԵՏ ԵՄ...»

(Շարունակում Գ. Էջեն)

«Բովին ցորեն աղանձեմ,  
Աղանձեմ ու չխանձեմ,  
Երկանքին տամ ու աղեմ,  
Փոխենձ անեմ՝ չմաղեմ,  
Ջրով եփեմ, շաղիսեմ,  
Սոխը իւրի մէջ դաղեմ,  
Գաւաթն ածեմ՝ փոս անեմ,  
Իւր, թան լցնեմ՝ որս անեմ...»

Մանկական գործերը երեխայի աշխարհը բացայայտում են հենց երեխայի համար, միաժամանակ հեղինակը իր խաղ-ասելիքի միջոցով, աներևոյթ, առանց՝ մանկան կողմից երբեք չընդունող կարգադրութիւնների, նրա մէջ դաստիարակում է կարգապահութիւն, աշխատասիրութիւն, շրջապատի մարդկանց, կենդանիների, բնութեան երեւոյթների հանդէպ ստեղծելով ջերմ կապ, ինչն էլ նրան կ'օգտի մեծանալ հոգեպարար ներդաշնակութեան մէջ:

Ժամանակակիցների բնորոշմամբ, բնութիւնը շրայլ է եղել բանաստեղծի հանդէպ:

«Չարմանում եմ, ով քեզ շրայլ, ինչքան բան ես տուել ինձ».

կարծում եմ Արարչին ուղղուած թումանեանական խօսքն անչափ սազական է և նաեւ Գուրգեն Գաբրիելեանին:

Առաջին ժողովածուն լոյս է տեսել 1960 թուականին, որին հետեւել են հինգ տասնեակից անելի գրքեր՝ հրատարակուած՝ Երեւանում, Պաշտում, Մոսկուայում: 1973 թուականին Մոսկուայում ռուսերեն հրատարակուած «Լեռնային Կակաչ» գիրքն ուներ հարիւր հազար տպաքանակ: Արժանացել է մի շարք գրական հեղինակարու մրցանակների, ճանաչուած ու սիրուած էր ոչ միայն Արցախում ու Հայաստանում, այլև՝ Սփիւռքում:

Գուրգեն Գաբրիելեան արուեստագետի եւ քաղաքացու կենսուրում առանցքային էր արցախեան ազգային-ազատագրական պայքարը: Աներկբայ նետուեց պայքարի յորձանուտ, ազատագրական պայքարի ազատամարտիկը երբեք չի լքել նրան, շարունակելով ապրել հոգում՝ մի օր կրկին հայրենիքի ազատութեան դրօշ պարզելու համար: Գուրգեն Գաբրիելեանը մեկն էր 1965 թուականին ԽՍՀՄ դեկադարութեանը Արցախի կործանումն ահազանգող եւ ժամանակին մեծ ազդուկ հանած ու այսօր պատմական փաստաթուղթ դարձած ևամակի 13 հեղինակներից: 1988 թուականի փետրուարեան արտաթուղթը նրան մղեց պայքարի տարերքի մէջ: Շարժումը նոր երակ եղաւ նաեւ նրա ստեղծագործութիւնում, շուտով երեսացին բանաստեղծութիւն-մարտակոչերը, որոնցից շատերը երգ դարձան: Շարժման հերոսներին նուիրուած իր բանաստեղծութիւնների համար երաժշտութիւն է յորհել ինքը եւ այսօր այդ երգերը սեղ ունեն հայկական տարբեր համոյթների եւ անհատ կատարողների երգացանկում:

Անհնար է խօսել Գուրգեն Գաբրիելեանի մասին եւ չանդրադառնալ «Ղարաբաղի Հրոսակներ»-ին: Թերեւս ամենաերգուածն է իր երգերի մէջ, ամենասիրուածը, եւ ինչպէս «Այբուբենը Երգերի մէջ» ժողովածուն իր մանկագրութեան թագն ու պսակն է,

այնպէս էլ «Ղարաբաղի Հրոսակներ»ը մեր ժողովրդական աշխատանքային երգերի նմանութեամբ ստեղծած արցախեան նուագների «Երգ Երգոց»ն է: «Ղարաբաղի Հրոսակներ»ը հարստացրեց մեր ունեցած հորովելների շարքը: Լինելով խօսքի եւ երաժշտութեան հեղինակ, Գուրգեն Գաբրիելեանը նաեւ հորովելի անգուզական կատարողն էր եւ ի գուր չեն ինքնուս երգահանին «գուսան» անուանել:

Անկերտի Մշակույթի Տանը կազմակերպուած միջոցառումը, ինչպէս նշեցինք, սկսուեց «Ղարաբաղեան հորովելով»: Նաեւ միջոցառման ընթացքում, մեր բարբառով գրուած բանաստեղծութիւնների համադրումով եւս մէկ անգամ ինչեց երգը՝ հանդիսավար Սասուն Սարգսեանի կատարմամբ: Դահլիճը ջերմութեամբ արձագանգեց: Անկերտի Մշակույթի եւ Երիտասարդութեան Կեդրոնի «Բերդ» համոյթը ներկայացրեց «Կալին Երգը», «Այուն Երգը», «Ըրկանքն Երգը» ստեղծագործութիւնները: Արուեստի դպրոցի թատերական խումբը ներկայացրեց «Պապաճշտ» լեկենսի բեմադրութիւնը:

Յուշ-ցերեկոյթին ելոյթ ունեցան նաեւ հիւրերը: Բանաստեղծի այրին՝ Կարինե Նուհիկը, նշեց, որ Գուրգեն Գաբրիելեանը անչափ կապուած էր իր հայրենի Արցախի հետ, որին էլ նուիրել է իր բոլոր արարումները: «Այբուբենը Երգերի մէջ» գիրքը այսօր դարձել է ոչ միայն հայրենիքում, այլև աշխարհի չորս ծագերում ապրող հայ մանուկների սիրելի գրքերից եւ այբուբենին նուիրուած տոների գարդը: Տիկին Նուհիկը շնորհակալութիւն յայտնեց միջոցառման կազմակերպիչներին, նշելով, որ օրուայ հանդիպումը Գուրգեն Գաբրիելեան բանաստեղծի ու երգահանի մեծարանքի տօն է:

Արցախի Գրողների Միութեան վարչութեան նախագահ Վարդան Յակոբեանը իր խօսքում վարելուեց բանաստեղծի հարազատ ծննդավայրի արձագանգը յոբելեանի առթիւ՝ միջոցառման առթիւ դրուատելով կազմակերպիչներին:

- Տեսայ, թէ ինչպիսի ջերմութեամբ երեխաները ներկայացրին Գաբրիելեանի բանաստեղծութիւնները, ասել է թէ՛ բանաստեղծը նորից կենսւք առաւ: Նրա բազմաթիւ ստեղծագործութիւններ եւ լսել եմ հենց իր շուրթերից, շատ անգամ միասին ենք արտասանել եւ մենք երեքով՝ Գուրգեն Գաբրիելեանը, Հրաչեայ Բեկլարեանը եւ ես՝ օրուայ մեծ մասը միասին էինք: Գաբո Ապրելը ժողովրդի հետ էր եւ ինչպէս տեսնում ենք նա անմահ է, նա մայր հողից ծնուած արուեստագետ է եւ արուեստի բոլոր բնագաւառներում բացառիկ ու եզակի է, թէ՛ որպէս երգահան, թէ՛ որպէս մանկագիր, թէ՛ որպէս բանաստեղծ ու թատերագիր: Գաբրիելեանի ընկերութիւնն ու բարեկամութիւնը վայելել են տասնամեակներ: Որպէս մանկագիր նա այս բնագաւառում ունեցաւ իր «դպրոցը»: Գիտեմ, որ բոլորը էլ լսելով նրա «Ղարաբաղի Հրոսակներ»ը յուզուում էք, իմ յուզումները առանձնակի է, որովհետեւ այդ երգը ծնուել է իմ ներկայութեամբ: «Անվտական Ղարաբաղ» թերթի կից սենեակներում էինք աշխատում եւ առաջինը եւ գրեցի, որ շուտով կ'ունենանք նման մի երգ: Ցաւով պիտի նշեմ, որ այսօր շատ երգող «Ղարաբաղի Հրոսակներ»ը նոյնքան էլ աղաւաղուած է, յաճախ նոյնիսկ չեն նշում հեղինակի անունը, ինչն անչափ վիրաւորական է:

Հորովել ժողովրդական բանահիւտութեան վրայ ստեղծուած ստեղծագործութիւնն է եւ պէտք է նշուի հեղինակը, ինչպէ՛ս կարելի է Կոմիտասի «Հրոսակներ»ը երգել եւ չասել հեղինակի անունը: Գուրգեն Գաբրիելեանի ստորագրութիւնն է «Ղարաբաղի Հրոսակներ»ը եւ անպայման պէտք է նշուի նրա անունը: Գաբրիելեանական շատ ստեղծագործութիւններ այսօր երգուում են որպէս ժողովրդական երգեր: Այս հարցում եւս անելիքներ ունենք: Պիտի խոստովանենք, որ շատ բան եմ սովորել Գուրգեն Գաբրիելեանից: Նա իմ ուսուցիչն էր, եւ անհնար է նման արուեստագետի հանդէպ ունեցած պարտքը մարել: Նրա բանաստեղծութիւնները տարբերում էին բոլորիս ստեղծագործութիւններից իրենց գործառնականութեամբ: Տեսեք, նրա բանաստեղծութիւնը ներկայ է կենսի բոլոր բնագաւառներում եւ դրա համար էլ ժողովրդականութիւն է վայելում:

90-ամեակին նուիրուած՝ Գրողների Միութիւնը առաջարկութիւններ է ներկայացրել պատկան մարմիններին: Առաջարկել ենք Գաբո Ապրել նուիրուած մի փոքրիկ յուշահամալիր կառուցել Ստեփանակերտի տեսարժան վայրերից մեկում, դա կը լինի կողող՝ քանդակուած հորովելով, որի շարունակութիւնը կը լինի գրողի կիսանդին: Նրա հայրական տունը Խանցեզում կը դառնայ ինքնաթիռի տուն՝ ասել է թէ մշակույթի կեդրոն: Այս ամենը առաջիկայում: Եւ այս ամենը մեր հանձնարող հայրորդու թողած գրական, երաժշտական ժառանգութիւնը գալիք տասնելու համար, ասաց Վ. Յակոբեանը: Միջոցառման ւարտին Վարդան Յակոբեանը գրեց նուիրեց գրադարանին:

Գուրգեն Գաբրիելեանի 90-ամեակին նուիրուած միջոցառումները կը շարունակուեն:

## «ԺԱՄԱՆԱԿ» օրաթերթի հարցազրոյցը Հրաչ Զիլինկիրեանի հետ

(Շարունակում Բ. Էջեն)

Նուրբեան առումով կը մայ սփիւռքեան իրականութիւն: Անշուշտ, այնտեղ կան նրբութիւններ. Միջին Արեւելքի մէջ հայերը լաւապէս պահպանած են լեզուն եւ մշակոյթը, այն ալ որովհետեւ կ'ապրին իբրեւ քրիստոնեայ փոքրամասնութիւն՝ իսլամ երկիրներու մէջ: Իսկ Արեւմուտքի մէջ տարբեր է, բայց սփիւռքը սփիւռք է:

Ուրիշ հարց մըն ալ, որուն մասին վերջերս սկսայ մտածել, հիմա կայ սփիւռքին սփիւռքը՝ Հայաստանի մէջ: Այսինքն, սփիւռքեախայեր, որոնք եկած են Հայաստան եւ երկար տարիներ հոս կ'ապրին, ծնուելով «սփիւռք» մըն են՝ Հայաստանի մէջ, որովհետեւ անոնք ընդհանրապէս Հայաստանի հասարակութեան կողմէ կը դիտուին որպէս սփիւռքախայեր, ոչ թէ իբր համաքաղաքացիներ, եւ անոնք կրկին կը մնան սփիւռք, այս անգամ՝ հայրենիքի մէջ: Եւ ունինք նաեւ միւս երեւոյթը՝ Հայաստանի սփիւռքը՝ սփիւռքի մէջ: Այս հարցերը ուսումնասիրութեան նիւթեր են, որոնք կրնան դոկտորական լաւ նիւթ դառնալ:

### - Վերադառնալով Մերձավոր Արեւելքին, տարածաշրջանը խաղաղեւուն պէս գաղտնիները ետ կը դառնան:

- Միշտ պատերազմէն փախչող մարդը պարտադրուած կը փախչի, այն միտքով, որ քանի մը տարի ետք, այդ ամէն ինչը անցիկ, նորէն ետ դառնայ: Նման պարագաներուն միշտ այդպէս է՝ ժամանակակար կ'երթաս, բայց այդ ժամանակակարը կը դառնայ մշտական: Ծատ քիչ անգամներ եղած են ետ դարձողներ, օրինակ՝ Լիբանանի պատերազմին երբ մարդիկ Էմիրութիւններ կամ Միացեալ Նահանգներ գաղթած են, այսօր երեսուն տարիէ ի վեր անոնք հոն են, օր մը թերեւս վերադառնան, բայց այդ ժամանակակարը յաճախ տասնեակ տարիներ կ'երկարի, երեխաները կը մեծանան, կենսքը կը փոխուի եւ վերադարձը կը դժուարանայ: Կենսքն է նաեւ, որ մեզ կը ձեւաւորէ:

### - Ինչն է պատճառը, որ հայեր, այս կամ այն երկրին մէջ ապրելով եւ Հայաստանը այնքան ալ գրաւիչ արթնլու միջավայր չեն ստեղծել, իրենց միտքին մէկ անկիւնը անպայման ունին Հայաստանը: Արդեօք հայրենիքի ո՛ւժն է այդ մեկը, թէ՛ ուրիշ պատճառ մը եւս կայ:

- Անշուշտ, հայրենիքի ուժն ալ կայ: Իբրեւ ընկերաբան, իմ մտքեցումս այն է, որ երբ դուն կ'երթաս ուրիշ երկիր մը, պայման չէ որ միշտ այդ երկրին հասարակութիւնը քեզ ընդունի իբրեւ իր մէկ մասնիկը, դուն միշտ դրսեցի ես, միշտ օտար ես, կրնաս այդ երկրին անձնագիրը ունենալ, բայց խօսքիդ մէջ օտար շեշտ մը կայ, մորթիդ գոյնը քիչ մը թուի է, եւ այլև: Եւ որովհետեւ այդ «օտարութիւնը» կայ, դուն կը զգաս, որ քու արմատը Հայաստանն է, հայրենիքն է: Սփիւռքը իր զգացումով իր հաւաքական երեսակայութեան մէջ հայրենիքի գաղափարը պահեր է, իբրեւ իր գոյութեան աղբիւրը ստեղծելով իր երեսակական հայրենիքը: Անշուշտ, Հայաստանին հանկու պատճառներէն են նաեւ մշակոյթն ու լեզուն, եւ Հայաստանը ի վերջոյ այդ բոլորին աղբիւրն է, որ մեզի եկած է դարերէ ի վեր:



**NOR SEROUNT**  
ARMEAN CULTURAL ASSOCIATION

**ԱՐԵԿ**  
DANCE TROUPE

*Let's Dance Together*

**ԴԱՐԵՆԸ ՄԻԱՍԻՆ**

ARTISTIC CHOREOGRAPHER  
**SHAHE DEMIRDJIAN**

Գերարուեստական Ղեկավար՝  
**ՇԱԷ ՏԵՄԻՐԺԵԱՆ**

DATE  
FRIDAY 21 JULY 2017 @ 8.30 PM, SATURDAY 22 JULY 2017 @ 8.30 PM (GALA)  
& SUNDAY 23 JULY 2017 AT 4.30 PM  
AT THEATRE MONOT, GEMMAYZE

TICKETS  
DONIGUIAN BOOK STORE | STUDIO VATCHE  
DISCOTHEQUE GEKA | OBELIX STATIONERY



**ԸՆԴՆԵՑ ԵՒ ՄՇԱԿԵՑ՝ ՓՕԼ ԱՅԱՆԵԱՆ**

**ԽՆՂՈՒՄԸ - ԽՆՂԱԿՆԵՆԸ**



By arrangement with Patrick Shart, Alain Boyaci & Moonlight Productions.

synopsis EVENTS

TICKETS @ BOX OFFICE

Francesco Smalto  
© Photo by Nicolas Aznavour



**FAQRA INTERNATIONAL FESTIVAL 2017**

**SATURDAY 15 JULY**

**CHARLES AZNAVOUR**

Kfardebian

Organized by synopsis EVENTS

By arrangement with Patrick Shart, Alain Boyaci & Moonlight Productions.

TICKETS @ BOX OFFICE

Francesco Smalto  
© Photo by Nicolas Aznavour

**ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵԾ**

Հիմնուած 1923-ին  
Հայկազեան Համալսարանին կից  
Գեռն.՝ 01-349816, Ե-մամակ՝ a\_e\_c@cyberia.net.lb

**2017-2018 տարեշրջանի արձանագրութիւններ**

2017-2018 տարեշրջանին, քաղաքի Հայ Աւետարանական Գուլեճը պիտի շարունակէ ընդունիլ ծիւն մինչեւ 12-րդ դասարան դիմող աշակերտներ:

Նորեկ աշակերտներուն դիմումները կ'ընդունուին ամբողջ Յուլիս ամսուան ընթացքին, Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8:30-էն 12:00, նախընտրաբար՝ ժամադրութեամբ:

Կրթական պատի դիւրութիւններ պիտի տրուին ուսումնապէս փայլուն, բայց նիւթապէս կարիքաւոր աշակերտներու:

Փոխադրութիւնը ապահովուած է ԲՈԼՈՐ շրջաններուն համար:

**Տնօրէնութիւն**

المحكمة الروحية الارمنية الانجيلية الابتدائية

ص.ب. 11- 0 377، رياض الصلح 2040 1107 بيروت، لبنان، هاتف 01443547

ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵՅԻ ՆԱԽԵՂԱԿԱՆ ԱՄԵՏԱՐԱՆ

ARMENIAN EVANGELICAL RELIGIOUS TRIBUNAL OF THE FIRST INSTANCE

P.O.Box 11-0377, Riad El-Sohh 1107 2040, Beirut, Lebanon  
Tel. 01-443547 email: armevangtrib@gmail.com

Լիբանանի Հայ Աւետարանական Նախադատ Ատեանը կը հրաւիրէ Պրն. Զրիստաբոր Գալուստ Կոնիկեանը (կամ իր անմիջական հարազատներէն մեկը) որ ներկայանայ Ատեանի քարտուղարութեան, որ կը գտնուի Մերձավոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Կեդրոնատեղիին մէջ, (Նախկին CMC հիւանդանոցը), Ժաթուրի, Պէյրութ, ստանալու համար իրեն դէմ բացուած դատահայցը եւ պարտն ու պատշաճը ինքզինք պատշապանելու ըստ օրինի:

Եթէ Պրն. Զրիստաբոր Գալուստ Կոնիկեանը չընդառաջէ այս կոչին, Լիբանանի Հայ Աւետարանական Նախադատ Ատեանը, վերոյիշեալ դատին պիտի նայի իր բացակայութեան օրէնքին համաձայն եւ պիտի արձակէ վճիռ Լիբանանի Հայ Աւետարանական Նախադատ Ատեանի Անձնակազմ Իրաւանց օրէնքներուն համաձայն:

Լիբանանի Հայ Աւետարանական Նախադատ Ատեան:

**ARARAD DAILY NEWSPAPER**

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية ارمينية | المجيرة المسؤولة: اني صرافيان  
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)